ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

Վեհափառ Հայրապետի մասնավոր կարգադրությամբ և Հարավային Ամերիկայի հայրապետական պատվիրակ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանի հրավերով օգոստոսի սկիզբներին հովվական այցելության մեկնեց, Հարավային Ամերիկա, Մայր Աթոռի միաբան տ. Զավեն եպս. Չինչինյանը՝ տանելով Հայոց Հայրապետի օրհնություններն ու ողջույնները հեռավոր այդ ափերի վրա ապրող մեր ազգային-եկեղեցական մարմիններին, հայ հավատացյալ ժողովրդին, բոլոր կազմակերպություններին:

ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄՈՒՄ

Դեպի Արգենտինա իր ճանապարհի վրա տ. Զավեն սրբազանը երկու շաբաթով մնում է Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմում որպես հյուր առաջնորդարանի:

Օգոստոսի 18-ին, ս. Աստվածածնի վերափոխման տոնին, պատարագում և քարոզում է Նյու-Յորքի հայոց ս. Վարդան առաջնորդանիստ Մայր տաճարում, ապա այցելում Նյու-Ճըրզիի, Թենեֆլայի, Լոնկ Այլենտի, Բոստոնի հայկական եկեղեցիներն ու համայնքները, մշակութային սրահները՝ ամեն տեղ հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԹԵՄՈՒՄ

Այնուհետև տ. Զավեն սրբազանը հովվական այցելությամբ լինում է նաև Կալիֆորնիայի հայոց թեմում: Օգոստոսի 25-ին պատարագում և քարոզում է Լոս-Անժելոսի ս. Հովհաննես-Կարապետ եկեղեցում, ապա Սան-Տեկեկոյում՝ ամենուրեք հաղորդելով Ամենայն Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունը՝ «պատմելով միանգամայն ս. Էջմիածնի և առհասարակ մեր հայրենիքի մեջ կատարվող նորոգությանց, վերափոխումներու և հառաջդիմության մասին» («Զեկուցագիր» տ. Զավեն եպիսկոպոսի):

Լոս-Անժելոսում տ. Զավեն սրբազանը հրավիրվում է ներկա լինելու թեմական խորհրդի հերթական մեկ նիստին, և ողջունելով թեմական խորհրդի պատվարժան անդամներին, հաղորդում է Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

Տ. Զավեն սրբազանը ապա հրաժեշտ է առնում «խոր տպավորություն կրելով Հյուսիսային Ամերիկայի մեր թեմերու և եկեղեցիներու շատ լավ կազմակերպված վիճակեն, հառաջ տարվող օգտաշատ աշխատանքներեն», ինչպես գրում է սրբազանն իր հովվական այցելության մասին Վեհափառ Հայրապետին ուղղյալ իր դեկտեմբեր 10 թվակիր զեկուցագրում:

ԱՐԳԵՆՏԻՆԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 5-ին տ. Զավեն սրբազանը ժամանում է Բուենոս-Այրես, ուր ընդունվում է հայրապետական պատվիրակ տ. Բաբգեն սրբազանի կողմից «սրտբաց և եղբայրական սիրով, որպես առաջնորդարանի և թեմի հյուրը»: Տ. Զավեն սրբազանը երկու անգամ պատարագում և քարոզում է ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում, ապա Վենսենդե-Կոբեզի արվարձանի եկեղեցում:

Ըստ սրբազանի հաղորդման, այսօր Արգենտինայում ապրում է շուրջ 70 հազար հայություն: Թեմում պաշտոնավարում են տ. Հարություն ծ. վրդ. Մուշյանը և չորս քահա-

նա հայրեր: Հրատարակվում են **Արմենիա** օրաթերթը և **Շարժում** շաբաթաթերթը: Գործում են բարեգործական, մշակութային, մարզական, հայրենասիրական և այլ միություններ՝ ոգևորություն ստեղծելով հանայնքի ծոցում: «Առաջնորդ սրբազանը, տ. Բաբգեն արքեպ. Ապատյան, հայ հոգևորականության առաջավոր դեմքերեն մին, բոլորին կողմե կվայելե խոր համակրանք և վարկ», գրում է տ. Զավեն սրբազանը:

Բուենոս-Այրես իր կեցության օրերին տ. Զավեն սրբազանն այցելում է հայկական վարժարանները: «Բարձրագույն կարգերու աշակերտության խոսեցա և պատմեցի մեր վերածաղկյալ հայրենիքի հառաջդիմություններու, մեր պատմական վանքերու վերանորոգումներու, սուրբ Էջմիածնի բարեզարդության մասին և հանձնեցի իրենց հայրենական հուշանվերներ» («Զեկուցագիր»):

Տ. Զավեն սրբազանը երկու անգամ դասախոսություններ է կարդացել Բուենոս-Այրեսի Հ. Բ. Ը. միության սրահում, «հոծ բազմության առջև», և սեպտեմբերի 7-ին տ. Բաբգեն արքեպիսկոպոսի հետ ներկա եղել արգենտինյան կառավարության կողմից, ի պատիվ մեծանուն հայ գիտնական ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, տրված ճաշկերույթին:

Տ. Զավեն սրբազանը, հանուն տ. Բաբգեն արքեպ. Ապատյանի, հայ եկեղեցու կողմից ներկա է լինում Քենտրերիի արքեպիսկոպոս դոկտ. Մայքլ Ռեմզիի՝ Բուենոս-Այրես այցելության առթիվ կաթոլիկ եկեղեցում տեղի ունեցած էկումենիկ աղոթքին և ապա անգլիական դեսպանատան մեջ տրված պաշտոնական ճաշկերույթին: «Իբրև ս. Էջմիածնի ներկայացուցիչ այս ճաշկերույթին, բազմաթիվ այլ հոգևորականներու և հրավիրյալներու մեջ տ. Զավեն եպս. Չինչինյանին հատկացուցած էին ամենեն պատվավոր տեղերեն մին» («Զեկուցագիր»):

Սեպտեմբերի 22-ին, կիրակի օրը, տ. Զավեն սրբազանը, հանուն հայ եկեղեցու, ներկա է լինում Բուենոս-Այրեսի հույն օրթոդոքս եկեղեցում Կիպրոսի վերջին դեպքերի տխուր առիթով հույն զոհվածների հիշատակին նվիրված հոգեհանգստյանը և ապա հունաց առաջնորդին և հույն համայնքի պաշտոնական անձանց է ներկայացնում «հայ համայնքի համակրանքի արտահայտությունները հօգուտ արդարության և ի հաստատություն խաղաղության՝ Կիպրոսի մեջ» («Զեկուցագիր»):

Իբրև Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչ, տ. Զավեն սրբազանը տ. Բաբգեն արքեպիսկոպոսի հետ այցելում է Բուենոս-Այրեսում քույր եկեղեցիների հոգևոր պետերին և, հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույնները, տեսակցություններ է ունենում «էկումենիկական-եղբայրական սիրալիր մթնոլորտի մեջ» («Զեկուցագիր»):

Հոկտեմբեր ամսվա սկզբում, որպես հայ մշակույթի ամիս, Բուենոս-Այրեսում տեղի են ունենում հանդիսություններ: Այս առթիվ քաղաքապետության որոշումով մայրաքաղաքի նախկին Կալիֆոռնիա գլխավոր պողոտան պաշտոնական հանդիսությամբ վերանվանվում է **Արմենիա** պողոտա:

Հանդիսությանը ներկա են լինում տ. Բաբգեն և տ. Զավեն սրբազանները, ինչպես նաև բազմահազար արգենտինահայեր: Տ. Բաբգեն արքեպիսկոպոսը բացում է **Արմենիա** պողոտայի անունը կրող հուշատախտակը՝ ժողովրդական խանդավառ արտահայտություններ մեջ:

Տ. Զավեն սրբազանը հոկտեմբերի կեսերին հրաժեշտ է տալիս Արգենտինայի հայ թեմին, որն ապրում է «ազգային-մշակութային աշխույժ կյանքով», հովվական այցելության է մեկնում Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեո:

ՄՈՆՏԵՎԻԴԵՈՅՈՒՄ

Մոնտեվիդեոյում ապրում է շուրջ 15 հազար հայություն: Թեմում կա մեկ եկեղեցի և մեկ քահանա:

Հոկտեմբերի 12-ին, կիրակի օրը, տ. Զավեն սրբազանը ս. պատարագ է մատուցում և քարոզում՝ հաղորդելով Հայոց Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

Մոնտեվիդեոյում կան երկու հայկական վարժարաններ. Ազգային վարժարանը՝ 62 երկսեռ աշակերտներով, և Հ. Բ. Ը. միության նորակերտ վարժարանը՝ 380 երկսեռ աշակերտներով:

Տ. Զավեն սրբազանն այցելում է երկու վարժարանները, և «վարժարաններու աշակերտության ալ տարբեր օրերու ընթացքին խրատականներ խոսեցա և հուշանվերներ հանձնեցի» («Զեկուցագիր»):

Հ. Բ. Ը. միության վարժարանի սրահում տ. Զավեն սրբազանը դասախոսություն է կարդում ս. Էջմիածնի վերածննդյան և Հայոց Հայրապետի 20-ամյա եկեղեցաշեն գործունեության մասին:

«Հայկական գաղութը այստեղ ոչ տպարան և ոչ ալ օրաթերթ ունի, բայց կան երկու հայկական ռադիոկայաններ» («Զեկուցագիր»):

Սրբազանն այցելում է հայկական այս երկու ստուդիաները, և «ինտերվյուի ձևով պատմեցի հայրենական տպավորություններ-

րու մասին»: Տ. Զավեն սրբազանը Մոնտեվիդեո իր այցելության տպավորություններն ամփոփում է՝ եզրակացնելով, որ «գաղութը անպայման կարիքը ունի նվիրյալ հոգևորականներու, կոչման գիտակցությամբ և իրենց պաշտոնը փառավորող, լուրջ, շրջահայաց եկեղեցականներու» («Զեկուցագիր»):

ԲՐԱԶԻԼԻԱՅՈՒՄ

Հոկտեմբերի 11-ին, ուրբաթ օրը, տ. Զավեն սրբազանը մեկնում է Սան-Պավլո, ուր դիմավորվում է Ազգային կենտրոնական վարչության անդամների, քահանայից դասի և այլ պաշտոնական անձանց կողմից և առաջնորդվում ս. Գևորգ եկեղեցի:

Սրբազանը Սան-Պավլոյում մնում է մինչև նոյեմբերի կեսերը, երեք անգամ պատարագում և քարոզում՝ հաղորդելով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները:

Ըստ տ. Զավեն սրբազանի վկայության, Բրազիլիայում ապրում է շուրջ 15 հազար հայություն: Գաղութի կենտրոնն է Սան-Պավլոն, ուր կա ս. Գևորգ անունով հայկական եկեղեցի և մի այլ եկեղեցի էլ՝ քաղաքի արվարձանում:

Սան-Պավլոյում կա մեկ ազգային վարժարան, 300 աշակերտ-աշակերտուհիներով, «մյուսը՝ փակված է ուսուցչի պակասեն»:

Սրբազանն այցելում է Ազգային վարժարան, ուր «հայրենասիրական խորքով խրատական մը կխոսի» աշակերտության առջև և հուշանվերներ բաժանում:

Գաղութում ակտիվ կերպով գործում են մի շարք հայրենակցական, մշակութային, մարզական երիտասարդական կազմակերպություններ, ինչպես նաև Հ. Բ. Ը. միությունը, որոնք աշխատում են վառ պահել թեմի ազգային-եկեղեցական ու կրթական կյանքը:

Տ. Զավեն սրբազանը նոյեմբերի կեսերին ավարտում է արդյունավետ և հաջող կերպով իր հովվական այցելությունը Հարավային Ամերիկա և Մայր Աթոռ է վերադառնում ԱՄՆ-ի վրայով, դեկտեմբերի 3-ին:

Դեկտեմբերի 4-ին, երկուշաբթի օրը, տ. Զավեն սրբազանը Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստում բանավոր կերպով զեկուցում է իր հովվական այցելության մասին:

Վեհափառ Հայրապետը, հանուն ժողովի, Իր գոհունակությունն ու հայրապետական գնահատանքն է արտահայտում տ. Զավեն սրբազանի հովվական սույն արդյունավետ գործունեության համար:

Տ. Զավեն սրբազանը դեկտեմբերի 10-ին մասնավոր գրությամբ Վեհափառ Հայրապետին է ներկայացնում Հարավային Ամերիկա կատարած իր հովվական այցելության գրավոր զեկուցագիրը: